ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանյան Դաշնությունը, որ այսուհետև անվանվելու են Կողմեր,

գտնելով, որ իրենց միջև բարեկամության, բարիդրացիության հարաբերությունների և փոխշահավետ համագործակցության հետագա զարգացումը համապատասխանում է երկու պետությունների ժողովուրդների արմատական շահերին և ծառայում է խաղաղության ու անվտանգության գործին,

նշելով Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒժերի իրավական կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև 1992 թվականի օգոստոսի 21-ին կնքված Պայմանագրի նշանակությունը,

առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության պաշտպանության երկուստեք ձգտումով,

ճանաչելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելը համապատասխանում է տարածաշրջանում խաղաղության և կայունության պահպանման նպատակներին,

հաստատելով իրենց նվիրվածությունը Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության, Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրության և Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի նպատակներին ու սկզբունքներին,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Պայմանագրի նպատակների համար հետևյալ տերմինները նշանակում են.

1.«Ռուսաստանյան ռազմակայան»՝ Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի զինվորական կազմավորումներ, որոնք տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության կողմից հատկացված իր տարածքի տեղամասերում՝ հստակ նշված ու Կողմերի միջև համաձայնեցված սահմաններով:

2.«Ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորում» («զինվորական կազմավորում»)՝ Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի միավորում, զորամաս, ստորաբաժանում, ձեռնարկություն, հիմնարկություն և այլ կազմավորում, որը տեղաբաշխված է Հայաստանի Հանրապետության տարածքում և մտնում է ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ:

3.«Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձինք»՝

ա) Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի զինծառայողներ, որոնք զինծառայություն են անցնում ռուսաստանյան ռազմակայանում,

բ) քաղաքացիական անձնակազմ՝ Ռուսաստանյան Դաշնության քաղաքացիներ, որոնք աշխատում են ռուսաստանյան ռազմակայանում,

գ) անձինք, որոնց Ռուսաստանյան կողմը գործուղել է ռուսաստանյան ռազմակայան:

4. «Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց ընտանիքների անդամներ»՝ ամուսիններ, երեխաներ, ծնողներ, ինչպես նաև այլ անձինք, որոնք գտնվում են ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց խնամքի տակ:

5. «Իրավասու մարմիններ»՝

- Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության դատարաններ, դատախազության, ներքին գործերի և ազգային անվտանգության մարմիններ, Պաշտպանության նախարարության հետաքննության մարմիններ, վարչական այլ մարմիններ, որոնց իրավասության մեջ են մտնում սույն Պայմանագրով կարգավորվող հարցերը,

- Ռուսաստանյան Դաշնության համար՝ Ռուսաստանյան Դաշնության զինվորական դատարաններ և զինվորական դատախազության, Հակահետախուզության դաշնային ծառայության մարմիններ, որոնք ստեղծվում են զինվորական կազմավորումներին սպասարկելու համար, ինչպես նաև ռուսաստանյան ռազմակայանում գտնվող զինվորական պարետներ,

զորամասերի հրամանատարներ (որպես հետաքննության մարմիններ):

6. «Ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմին»՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան զինվորական հրամանատարության պաշտոնական ներկայացուցիչ, որի օպերատիվ ենթակայության տակ է գտնվում ռուսաստանյան ռազմակայանը, ինչպես նաև սույն Պայմանագրի 18 հոդվածում նշված Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒժերի միավորումները, զորամասերն ու ստորաբաժանումները:

7.«Շարժական գույք»՝ ռուսաստանյան ռազմակայանի օգտագործման մեջ գտնվող հաստիքային ու ցուցակագրված կայքը, ներառյալ սպառազինության, զինամթերքի, մարտական և այլ տեխնիկայի, նյութատեխնիկական միջոցների բոլոր տեսակները:

8. «Անշարժ գույք»՝ ռուսաստանյան ռազմակայանի տարածքում գտնվող շենքերն ու կառույցները, հաղորդակցման ուղիներն ու ենթակառուցվածքի այլ օբյեկտները, որոնք նախատեսված են նրա գործունեությունն ապահովելու համար:

Հոդված 2

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանյան Դաշնության զինված ուժերի զինվորական կազմավորումները 1995 թվականի ընթացքում վերածվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ռուսաստանյան ռազմակայանի:

Հոդված 3

Ռուսաստանյան ռազմակայանը կատարում է Կողմերի համապատասխան պայմանավորվածություններից բխող խնդիրները:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամանակամիջոցում Ռուսաստանյան Դաշնության շահերը պաշտպանելու պարտականություններից բացի ռուսաստանյան ռազմակայանը Հայաստանի Զինված ՈՒժերի հետ համատեղ ապահովում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը՝ նախկին ԽՍՀ Միության արտաքին սահմանով:

Ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների կիրառումն իրականացվում է Կողմերի

փոխադարձ պայմանավորվածությունների, 1992թ. մայիսի 15-ի Կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագրի, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև 1991թ. դեկտեմբերի 29-ի Բարեկամության, համագործակցության ու փոխադարձ անվտանգության մասին պայմանագրի հիման վրա և Կողմերի օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 4

Ռուսաստանյան ռազմակայանի կարգավիճակը որոշվում է սույն Պայմանագրով և N 1 Արձանագրությամբ, որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Հոդված 5

Ռուսաստանյան ռազմակայանը տեղակայվում է Կողմերի առանձին համաձայնագրով որոշված շրջաններում ու կետերում:

Ռուսաստանյան ռազմակայանի տեղակայման և գործունեության համար տեղամասերից (դրանցում գտնվող անշարժ գույքով) օգտվելու պայմանները, ինչպես նաև այդ տեղամասերի չափերն ու սահմանները որոշվում են Կողմերի առանձին համաձայնագրերով:

Հոդված 6

Ռուսաստանյան կողմն իրավունք ունի վերակառուցելու իր կողմից օգտագործվող օբյեկտները և կատարելու կապիտալ շինարարություն իրեն հատկացված տարածքում: Նմանօրինակ աշխատանքների կատարումը համաձայնեցվում է Հայկական կողմի հետ:

Ռուսաստանյան ռազմակայանում կառուցված օբյեկտների սեփականության իրավունքը, սույն Պայմանագրի ստորագրումից հետո, պատկանում է դրանց շինարարության ֆինանսավորումն իրականացրած Կողմին:

Հայկական կողմը պահպանում է սույն Պայմանագրի ստորագրման պահին Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի կազմի մեջ մտնող անձանց կողմից զբաղեցրած՝ ինչպես ռազմակայանի

տարածքում, այնպես էլ դրանից դուրս գտնվող բնակելի ֆոնդից օգտվելու ռուսաստանյան ռազմակայանի իրավունքը՝ առանձին համաձայնագրով սահմանվող կարգով և պայմաններով:

Հոդված 7

Ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների շարժական գույքը Հայաստանի Հանրապետությունում նրանց գտնվելու ժամկետն ավարտվելուց հետո օգտագործվում է Կողմերի փոխադարձ համաձայնեցմամբ, բացառությամբ այն գույքի, որը այդ կազմավորումները ձեռք են բերել Ռուսաստանյան Դաշնության միջոցների հաշվին՝ սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո:

Հոդված 8

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի կառավարումն իրականացնում է Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի կառավարման համապատասխան մարմինը:

Ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմինը ռազմակայանի զինվորական կազմավորումների օպերատիվ և մարտական պատրաստության, նրանց նյութատեխնիկական ապահովման, ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամներին մշակութային, բժշկական, առևտրային, կենցաղային ու կոմունալ ծառայություններ մատուցելու հարցերում իր գործունեության մեջ փոխգործակցում է Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության և այլ գերատեսչությունների հետ:

Հոդված 9

Կողմերն ամեն կերպ աջակցում են Հայաստանի Հանրապետության բնակչության, պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների և ռուսաստանյան ռազմակայանի, նրա կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների միջև բարյացակամ հարաբերությունների պահպանմանը:

Ռուսաստանյան ռազմակայանը, ռազմակայանի կազմի մեջ մտնող անձինք, ինչպես նաև այդ անձանց ընտանիքների անդամները հարգում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, պահպանում նրա օրենսդրությունը, չեն միջամտում նրա ներքին գործերին:

Հայկական կողմը հարգում է ռուսաստանյան ռազմակայանի, նրա կազմի մեջ մտնող անձանց, ինչպես նաև այդ անձանց ընտանիքների անդամների կարգավիճակն ու իրավական կացությունը:

Հոդված 10

Ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողները կրում են իրենց համար սահմանված համազգեստ և ցուցակագրված զենք:

Ցուցակագրված զենքը ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողների կողմից գործադրվում է զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս՝ Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի համազինվորական կանոնադրություններով սահմանված կարգին համապատասխան:

Զենքի գործադրման կարգը այլ դեպքերում՝ ռուսաստանյան ռազմակայանի տարածքից դուրս, որոշվում է Կողմերի առանձին համաձայնագրով:

Հայկական կողմը ճանաչում է Ռուսաստանյան Դաշնությունում գործող այն փաստաթղթերը, որոնք հավաստում են ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների անձնավորությունը:

Հոդված 11

Ռուսաստանյան ռազմակայանն իր զբաղեցրած տարածքում իրականացնում է իր կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքներիի անդամների անվտանգության ապահովման, շարժական և անշարժ գույքի պահպանման միջոցառումներ:

Ռուսաստանյան ռազմակայանից դուրս այդ միջոցառումներն իրականացվում են Կողմերի փոխադարձ համաձայնեցմամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 12

Ռուսաստանյան ռազմակայանի հետ կապի կազմակերպման և ապահովման կարգը որոշվում է N 2 Արձանագրությամբ, որը սույն Պայմանագրի անբաժանելի մասն է:

Հոդված 13

Ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների օպերատիվ, մարտական պատրաստության ու ներքին ծառայության կազմակերպումը, զինծառայողներով ու քաղաքացիական անձնակազմով այն համալրելու կարգը, ինչպես նաև ռազմակայանի ապահովումը սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և այլ նյութական միջոցներով իրականացվում են Ռուսաստանյան Դաշնության օրենսդրությանը համապատասխան և Կողմերի համաձայնագրերով: Անձնակազմի ընդհանուր թիվը, սպառազինության և տեխնիկայի քանակը Կողմերը որոշում են փոխհամաձայնեցմամբ:

Ռուսաստանյան ռազմակայանը Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրով սահմանափակվող սովորական սպառազինությամբ ու տեխնիկայով ապահովելու նպատակով Կողմերը համաձայնեցնում են այդպիսի սպառազինության առկայության համար դրանց առավելագույն մակարդակների վերաբաշխման կարգը: Այդպիսի վերաբաշխումը կարգավորվում է N 3 Արձանագրությամբ, որը սույն Պայմանագրի անբաժանելի մասն է:

Հոդված 14

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրին և Վստահության ու անվտանգության ամրապնդման միջոցառումների 1992թ. Վիեննայի փաստաթղթին համապատասխան տեսչական ստուգումներ կատարելիս Կողմերի փոխգործողության կազմակերպումը որոշվում է առանձին համաձայնագրով:

Հոդված 15

Ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների մարտական պատրաստությունն իրականացվում է ռազմակայանին հատկացված տարածքներում: Հատկացված տարածքների սահմաններից դուրս մարտական պատրաստությունն իրականացվում է ըստ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության և Ռուսաստանյան Դաշնության Պաշտպանության նախարարության միջև ամեն տարի համաձայնեցվող պլանների:

Ռուսաստանյան ռազմակայանը ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության էկոլոգիական անվտանգությունն ապահովելու և նրա տարածքին, օբյեկտներին ու բնակչությանը վնաս հասցնելը կանխելու ուղղությամբ բոլոր անհրաժեշտ միջոցները: Ռուսաստանյան կողմը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության տարածքում էկոլոգիական անվտանգության նորմերը ռազմակայանի զինվորական կազմավորումների կողմից պահպանելու համար: Ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների կողմից էկոլոգիական վնաս հասցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից պահանջներ առաջանալու դեպքում հարցը քննում է Պայմանագրի 21 հոդվածին համաձայն կազմված Խառը հանձնաժողովը:

Հոդված 16

Ռուսաստանյան ռազմակայանը իրականացնում է իր գործունեությունը՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության մշակութային, պատմական օբյեկտների և բնական պաշարների պահպանմանն ուղղված միջոցառումներ:

Հոդված 17

Հայկական կողմը չի խոչընդոտում, վաղօրոք տրված հայտերով, իր տարածքի վրայով ի շահ ռուսաստանյան ռազմակայանի թռչող սարքերի թռիչքների իրականացմանը:

Թռիչքները կարող են կատարվել այն երթուղիներով, ինչպես նաև գոտիներում, շրջաններում, որոնք համաձայնեցրել է ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմինը

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության հետ:

Հոդված 18

Հայկական կողմն ապահովում է ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների կողմից Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հատումը:

Հայկական կողմն ամեն կերպ աջակցում է ռուսաստանյան ռազմակայանի հասցեով և հակառակ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության հաղորդակցության ուղիներով ու օդային տարածքով տեղափոխվող բեռները՝ բաց թողնելում՝ ապահովելով դրանց պահպանվածությունը իր տարածքում: Նշված բեռների մաքսային վերահսկողության հատուկ ռեժիմը որոշվում է Կողմերի առանձին համաձայնագրով:

Հայաստանի Հանրապետության տարածքում տարերային աղետների և Կողմերի անվտանգությանն ուղղված սպառնալիքի առաջացման դեպքում Հայկական կողմն ապահովում է Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի ստորաբաժանումների, զորամասերի և մոբիլիզացիոն ռեսուրսների անցումն իր պետական սահմանով՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության հաղորդակցության ուղիները՝ ըստ Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերի Գլխավոր Շտաբի հայտի:

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ չմտնող զինվորական կազմավորումներ Հայաստանի Հանրապետության տարածք մտցնելու մասին որոշումն ընդունվում է համատեղ և Կողմերի համաձայնեցմամբ:

Հոդված 19

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի ֆինանսական ապահովումն իրականացնում է Ռուսաստանյան Դաշնությունը:

Ռուսաստանյան ռազմակայանի պահման ծախսերի մի մասը կրում է Հայաստանի Հանրապետությունը:

Ռազմակայանի պահման ծախսերի տեսակներն ու չափերը, նրա ֆինանսավորման, նյութական միջոցներով ապահովման և

Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների կարգը որոշվում են առանձին համաձայնագրով:

Հոդված 20

Հայկական կողմն ապահովում է էլեկտրաէներգիայի, ջրի և կոմունալ-կենցաղային սպասարկման այլ տեսակների մատակարարումը ռուսաստանյան ռազմակայանին՝ Հայաստանի Հանրապետության Զինված ՈՒԺերի մատակարարման նորմերով և ռազմակայանի կենսագործունեության ապահովման համար անհրաժեշտ չափերով:

Հոդված 21

Սույն Պայմանագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված վիճելի հարցերի լուծման համար ստեղծվում է Խառը հանձնաժողով, որի կազմի մեջ Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է իր ներկայացուցիչներին:

Խառը հանձնաժողովը գործում է Կողմերի արտաքին քաղաքական գերատեսչությունների կողմից համատեղ հաստատվող կանոնների հիման վրա:

Խառը հանձնաժողովի գտնվելու վայրը որոշվում է Երևան քաղաքը:

Այն դեպքում, եթե Խառը հանձնաժողովը չի կարող լուծել իր քննարկմանը ներկայացված հարցը, ապա այն լուծվում է դիվանագիտական ուղիներով:

Հոդված 22

Ռուսաստանյան ռազմակայանում վարձակալությամբ աշխատելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ընդունելու դեպքում նրանց աշխատանքի վարձատրությունը կատարվում է Ռուսաստանյան Դաշնության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց ընտանիքների անդամները կարող են վարձակալությամբ աշխատել Հայաստանի Հանրապետության ձեռնարկություններում, հիմնարկություններում ու կազմակերպություններում, ընդ որում

նրանց նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը:

Նշված անձանց համար այդ աշխատանքի ժամկետը հաշվվում է ստաժ, որն անհրաժեշտ է կենսաթոշակային կամ այլ ապահովության համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող քաղաքացիական անձնակազմի անձանց աշխատանքի վարձատրության բոլոր տեսակներից Հայաստանի Հանրապետության ֆոնդեր կատարվող հատկացումները (սոցիալական պաշտպանության, բնակչության զբաղվածության, բժշկական ապահովագրության և այլն), ինչպես նաև նրանցից հարկերի գանձումը կատարում է ռուսաստանյան ռազմակայանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու չափերով:

Հոդված 23

Ռուսաստանյան կողմը Խառը հանձնաժողովի սահմանած չափերով կամ դատական կարգով Հայկական կողմին հատուցում է նյութական վնասը, եթե այն Հայաստանի Հանրապետության հիմնարկներին կամ քաղաքացիներին, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող երրորդ երկրների քաղաքացիներին պատճառել են ռուսաստանյան ռազմակայանը, նրա կազմի մեջ մտնող առանձին անձանց կամ այդ անձանց ընտանիքների անդամների գործողություններով:

Հայկական կողմը Խառը հանձնաժողովի սահմանած չափերով կամ դատական կարգով հատուցում է Ռուսաստանյան կողմին հասցված նյութական վնասը, եթե այն ռուսաստանյան ռազմակայանին, ինչպես նաև նրա կազմի մեջ մտնող անձանց կամ այդ անձանց ընտանիքների անդամներին պատճառվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ քաղաքացիների գործողություններով կամ զանցառությամբ:

Հոդված 24

Ռուսաստանյան կողմը չի օգտագործի ռուսաստանյան ռազմակայանը սույն Պայմանագրով չսահմանված նպատակների համար:

Հոդված 25

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում Կողմերի միջև վավերագրերի փոխանակման պահից:

Հոդված 26

Սույն Պայմանագիրը գործում է 25 տարի և ինքնաբերաբար երկարացվում է հետագա հնգամյա ժամանակամիջոցների համար, եթե Կողմերից ոչ մեկը Պայմանագրի գործողության հերթական ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի ծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Պայմանագրի դրույթները կարող են վերանայվել Կողմերից մեկի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 27

Եթե Կողմերից մեկը հայտնի սույն Պայմանագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին, ռուսաստանյան ռազմակայանի վերացման հետ կապված հարցերը լուծում է Խառը հանձնաժողովը: Ռուսաստանյան ռազմակայանի վերացումը պետք է ավարտվի Կողմերի միջև համաձայնեցված ժամկետում:

Կատարված է 1995 թվականի Մարտի 16 ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Լ. Տեր-Պետրոսյան
Հայաստանի Հանրապետության
կողմից

Ռուսաստանյան Դաշնության
կողմից

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Պայմանագրի

Հոդված 1

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձինք և այդ անձանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատում են իրենց անձը և ռուսաստանյան ռազմակայանին պատկանելը հավաստող փաստաթղթերը ներկայացնելով, իսկ նրանց անչափահաս երեխաները՝ այդ փաստաթղթերում արված գրառումների առկայության հիման վրա:

Հայկական կողմն այդ անձանց տալիս է անձնական իրերը Հայաստանի Հանրապետության պետական սահմանով անցկացնելու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձինք և այդ անձանց ընտանիքների անդամները իրենց պատկանող փոխադրամիջոցներով կարող են ազատ տեղաշարժվել ընդհանուր օգտագործման հաղորդակցության ուղիներով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվել ընդհանուր օգտագործման տրանսպորտից այն նույն պայմաններով, ինչ որ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար:

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների բեռների փոխադրումը տրանսպորտի բոլոր տեսակներով Հայաստանի Հանրապետության տարածքով, ինչպես նաև նրա օդային տարածությունով՝ իրականացվում է այն նույն պայմաններով, ինչ որ Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների համար են:

Հոդված 2

Հայկական կողմը պահպանում է ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց ու այդ անձանց ընտանիքների անդամների, պահեստազոր արձակված կամ պաշտոնաթող եղած անձանց, ինչպես նաև ֆենսաթոշակի անցածների՝ նրանց պատկանող շարժական և անշարժ գույքի սեփականության իրավունքը այն նույն պայմաններով, ինչ որ Հայաստանի Հանրապետության Զինված ՈՒԺերի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար են:

Հայկական կողմը այդ անձանց տալիս է սեփականության իրավունքով նրանց պատկանող գույքի կամ Հայաստանի Հանրապետության տարածքից ուրիշ երկրներ մշտական բնակության մեկնելիս դրա իրացումից ստացված դրամական միջոցների ազատ վաճառքի ու դուրսբերման, ինչպես նաև նրանց պատկանող ավանդների և ակտիվների փոխանցման հնարավորությունը: Դա չի տարածվում զենքի, թմրանյութերի, Հայաստանի Հանրապետության պատմական ու մշակութային արժեքների, հազվագյուտ խրերի վրա, որոնց դուրսհանելն արգելված է նրա օրենսդրությամբ:

Խառը հանձնաժողովն առնվազն կես տարին մեկ ճշգրտում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրսբերման համար սահմանափակված առարկաների ցանկը:

Հոդված 3

Հայկական կողմն ապահովում է ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների՝ բարձրագույն, միջնակարգ ու մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթություն ստանալու, նախադպրոցական մանկական հիմնարկներ ընդունվելու իրավունքը և բժշկական ապահովումը այն նույն պայմաններով, ինչ որ Հայաստանի Հանրապետության Զինված ՈՒԺերի զինծառայողների ու նրանց ընտանիքի անդամների համար են:

Ռուսաստանյան ռազմակայանի պահանջմունքների ապահովման համար Հայկական կողմը Ռուսաստանյան կողմին կտա Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանյան Դաշնության Պաշտպանության նախարարության հանրակրթական ու նախադպրոցական հիմնարկներ (դպրոցներ, լիցեյներ, մանկապարտեզներ, մուրներ և այլն) ստեղծելու հնարավորություն:

Այդպիսի հիմնարկների ստեղծման ու գործունեության կարգը որոշվում է Կողմերի առանձին համաձայնագրով:

Հոդված 4

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձինք և այդ անձանց ընտանիքների անդամները, ինչպես նաև պահեստազոր արձակված կամ պաշտոնաթող եղած անձինք իրավունք ունեն նույն պայմաններով, ինչ որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ձեռք բերելու անձնական սպառման համար անհրաժեշտ ապրանքներ և օգտվելու սպասարկումներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 5

Հայկական կողմը բնակության համար պահպանում է ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների՝ ռազմակայանի տարածքից դուրս գտնվող բնակելի մակերեսը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ապահովելով համապատասխան հաշվառումը (գրանցում, կացության վկայական կամ այլ ձև):

Հոդված 6

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձինք և այդ անձանց ընտանիքների անդամները կարող են փոստի ու կապի ծառայություններից օգտվել՝ Հայաստանի Հանրապետությունում գործող կանոններին համապատասխան:

Կողմերը ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների համար անարգել իրականացնում են փոստային դրամական առաքումներ, մասնավորապես՝ ալիմենտների, դրամական բավարարման և աշխատավարձի երկկողմ փոխանցումներ:

Հոդված 7

Ռուսաստանյան ռազմակայանն իրականացնում է իրեն պատկանող փոխադրամիջոցների պատշաճ տեխնիկական վիճակի հսկողությունը և պատասխանատվություն է կրում դրա համար:

Մասնավոր փոխադրամիջոցները տեխնիկական ստուգման են ներկայացվում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի համապատասխան մարմնին, իսկ ծառայողական փոխադրամիջոցները տեխնիկական ստուգում են անցնում ռուսաստանյան ռազմակայանում:

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձինք և այդ անձանց ընտանիքների անդամները պահպանում են ճանապարհային երթևեկության՝ Հայստանի Հանրապետությունում գործող կանոնները, ներառյալ ճանապարհատրանսպորտային պատահարների վայրում գործելակերպի կանոնները և վտանգավոր բեռների փոխադրման կանոնները:

Փոխադրամիջոցի վարման իրավունքի թույլտվության (լիցենզիա) վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ ակտերը ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների նկատմամբ կիրառվում են այն նույն պայմաններով, ինչ որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար են:

Ռուսաստանյան ռազմակայանին պատկանող փոխադրամիջոցների վարման թույլտվությունները (լիցենզիաները) վերցնելու որոշումը կայացնում է ռուսաստանյան ռազմակայանի զինվորական ավտոմոբիլային տեսչությունը՝ ըստ Հայաստանի Հանրապետության իշխանությունների դիմումի:

Ռուսաստանյան ռազմակայանի ավտոմոբիլային տեխնիկան ունի ռուսաստանյան հաշվառման համարներ և տարբերանշաններ:

Հայկական կողմը ճանաչում է ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամներին Ռուսաստանյան կողմի տված վարորդական փաստաթղթերը:

Հոդված 8

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերը կարգավորվում են Կողմերի առանձին համաձայնագրով:

Հոդված 9

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց, այդ անձանց ընտանիքների անդամներին՝ Հայաստանի Հանրապետության օրինապահության մարմինների կողմից կալանավորելու, ձերբակալելու դեպքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ ռուսաստանյան ռազմակայանի իրավասու մարմինների կողմից կալանավորելու, ձերբակալելու դեպքում Կողմերն այդ մասին անհապաղ ծանուցում են միմյանց:

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից ռուսաստանյան ռազմակայանում դատավարական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում նման գործողություններն իրականացնում են ռուսաստանյան իրավասու մարմինները՝ ըստ Հայկական կողմի համապատասխան մարմինների գրավոր դիմումի:

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող այն անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների նկատմամբ, որոնց կալանավորել կամ ձերբակալել են Հայկական կողմի իրավասու մարմինները, դատավարական գործողությունները կատարվում են միայն Ռուսաստանյան կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ, որոնք կալանավորվել կամ ձերբակալվել են ռուսաստանյան ռազմակայանի իրավասու մարմինների կողմից, դատավարական գործողությունները կատարվում են միայն Հայկական կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նման դեպքերում կալանավորվածը, ձերբակալվածը (հավասարապես նաև մեղադրյալը, ամբաստանյալը) իրավունք ունեն օգտվելու փաստաբանի, այդ թվում իր երկրի փաստաբանի ծառայություններից:

Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան իրավասու մարմինների կողմից կալանավորված անձանց ուղեկցումը, էտապավորումը, քննչական մեկուսարաններում պահելը Ռուսաստանյան կողմի խնդրանքով կարող են կատարել Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավասու մարմինները:

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց կամ այդ անձանց ընտանիքների անդամների կատարած հանցագործությունների գործերով, որոնք ենթակա են Հայաստանի Հանրապետության դատարանների քննությանը, մեղադրյալը կամ

ռուսաստանյան ռազմակայանի իրավասու մարմինները կարող են խնդրել դատապաշտպան նշանակել (այդ թվում Ռուսաստանի փաստաբան) կամ լիազորագիր տալ դատապաշտպանին:

Հոդված 10

Ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց, ինչպես նաև այդ անձանց ընտանիքների անդամների վրա տարածվում է մարդու և կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխման և դրանց դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Ռուսաստանյան ռազմակայանի սահմաններում կարող են կիրառվել Ռուսաստանյան Դաշնության Զինված ՈՒԺերում գործող կանոնադրությունները, եթե ընդսմին չի առաջանում ապառնալիք երկու Կողմերի բնակչության առողջությանը կամ կենդանիներին և եթե այդ կանոնադրությունները չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմինը և Հայաստանի Հանրապետության իշխանություններն անհապաղ միմյանց ծանուցում են հատկապես վտանգավոր վարակների առկայության, դրանց բռնկման նկատմամբ կասկածանքի և դրանց վերացման ընթացքի մասին, ինչպես նաև այդ առնչությամբ ձեռնարկվող միջոցների մասին:

Անհրաժեշտության դեպքում ռուսաստանյան ռազմակայանի կազմի մեջ մտնող անձանց առողջության պահպանման հատուկ միջոցառումներ անցկացնելիս նրա հրամանատարությունը փոխգործակցում է Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների հետ:

Ռուսաստանյան ռազմակայանն ինքնուրույն կազմակերպում է այն պարենամթերքի, դեղորայքի և մյուս ապրանքների որակի վերահսկողությունը, որը Ռուսաստանյան կողմը ներմուծում է ռուսաստանյան ռազմակայանի կարիքների համար: